

մէկն էր եռանդուն ճշմարտախօսութիւն
հանդերձ հիւրասէր ասպնջականութեամբ,
որովք զինքը ճանչցողներուն շատին սիրտը
գրաւած էր, եւ աւելի սիրելի եղած էր

Մոսքուայի համալսարանին մերազնեայ ու-
սանողներուն: Ինքը բնիկ Ղզլարցի էր, եւ 28
տարի էր որ կժառայէր՝ առաջ Փեթրսկուրկի
եւ յետոյ Մոսքուայի եկեղեցիներուն:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Լ. Ո. Ի. Բ. Բ.

Լազարեան ճեմարանին յիսնամեայ Յորե-
լինին հանդէսը ի պատճառս վախճանի Թա-
գաթառանգ Կայսրորդուոյն Նիքոլայի Ալեք-
սանտրովիչ՝ ուրիշ յարմար ժամանակի ձը-
գուեր է, այսինքն, ինչպէս որ կըսեն, Օգոս-
տոսի 10-ին:

— Կգրեն մեզի երեւանէն թէ Ս. Էջմիած-
նայ միաբաններէն քանի մը հոգի վախճա-
ներ են մօտերս, որոց մահը ծանր սգոյ եւ
տրտմութեան մէջ ընկղմեր է Միաբանու-
թիւնը: Նոցա մէջ աւելի զգալի եղեր է ա-
մենուն Մուշեղեան Սիմեոն վարդապետին բըռ-
նական մահը, որ գանձապահ էր Սրբոյ
Աթոռոյն: Այս աչալուրջ եւ բարեբարոյ անձը
բնիկ Բաղիշեցի էր. եօթը տարի առաջ նախ-
անգամ եղած էր Աթոռիւնու Կոնսիստո-
րիային, յետոյ Յաջորդ Ղզլարու, եւ վերջե-
րըս Հին Նախիջեւանու. իսկ այս տարի փե-
տրուար ամսոյն մէջ նշանակուեր էր Ս. Ա.
թոռոյն գանձապահ, եւ հաւատարմութեամբ
ու ազգասիրական հոգւով կկատարէր այն
ծանր պաշտօնը: Մայիսի 1-ին երեւանէն Ս.
Էջմիածին գառնալու ատենը՝ երբ հասեր է
Ղարսու ըստած տեղը, անկարծելի դիպուա-
ծով մը զարնուեր է, կըսեն, քովի պահանորդ-
ներէն մէկուն հրացանին պատահմամբ նե-

տուելովը, եւ գնտակը քարանքս ըստած
կառքին մէջ մտնելով՝ շիտակ գնացեր զար-
կեր է վարդապետին գլխուն, որ իսկոյն հո-
գին աւանդեր է:

— Խալիպեան Ուսումնարանին աշակերտաց
տարեկան հարցաքննութիւններն սկսան յու-
նիսի 7-ին, եւ վերջացան 16-ին: Գրեթէ ա-
մենայն դասարանաց մէջ եւ ամենայն առար-
կայից քննութեանը ներկայ գտնուեցաւ բաց
ի վարժապետաց նաեւ Գեր. Առաջնորդը, եւ
ընդհանրապէս վկայեցին ամէնքն ալ որ այս
տարի նախընթաց տարիներէն ալ աւելի յա-
ռաջագիմութիւն ունեցեր են աշակերտք ա-
մենայն ուսմանց մէջ՝ թէ իրենց ջանասիրու-
թեամբը եւ թէ վարժապետաց անխոնջ աշ-
խատութեամբը:

Ամսոյն 17-ին Գեր. Առաջնորդին դաս
տուած ուսմանցը, այսինքն բարոյական ի-
մաստասիրութեան եւ տրամաբանութեան
սկզբունքներուն քննութիւնն եղաւ հինգե-
րորդ եւ վեցերորդ դասարանաց մէջ. յե-
տոյ բոլոր աշակերտաց ի միասին խրատ մը
խօսեցաւ, եւ արձակուրդը սկսաւ. որով եւ
աշակերտաց մեծ մասը՝ այսինքն 83 հոգի
տեղերնին ճամբուեցան՝ ըստ խնդրոյ ծնո-
ղացն, պարապոյ միջոցը՝ ամիս ու կէս ժա-
մանակ՝ իրենց տները անցընելու համար: